

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ

ԼԻՍԻՆԻՔ

23 ՆԱՐՏ 1879



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱԼԵՆԱՆ

1879

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Սանժուան փաշա Աղանեան
Տիրաւն էֆէնտի Եւստոֆեան
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան
Ատովմ էֆէնտի Տէրոյենց

Ա. Ատենապետ
Բ. " "
Ա. Ատենապետ
Բ. " "

ՉԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Մատթէոս Եղիսկոպոս Իզմիրլեան
Ներսէս Վարդապետ Ասլանեան
Աննիքերիմ էֆէնտի Մանուկեան

Ատենապետ

ԴԱՄՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Խորէն Արքեպիսկոպոս Կարապէ
Պէտրոս էֆէնտի Ապտուլա
Պէտրոս էֆէնտի Սիմաւրաճեան

Ատենապետ

ԿԱԼՈՒԱՅՈՑ ԴԻՒԱՆ

Յովհաննէս էֆէնտի Լաւան
Մինաս էֆէնտի Պատմաճեան
Պօղոս էֆէնտի Ժամակոչեան

Ատենապետ

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կարապետ էֆէնտի Դաւադեան
Յարութիւն էֆէնտի Մէրեճմ-Պալի
Ստեփան էֆէնտի Փափազեան

Ատենապետ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Առաքել էֆէնտի Աթոն-Տիւրի
Մատթէոս էֆէնտի Ալիքսանեան
Յակոբ էֆէնտի Արշակ

Ատենապետ

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կարապետ Եղիսկոպոս Սերովեան
Սահակ Ապրո էֆէնտի

Ատենապետ

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Յովհաննէս էֆէնտի Պոյաճեան
Մկրտիչ էֆէնտի Լաւան
Տօթօր Փէշախաճեան էֆէնտի

Ատենապետ

ԽՄԱԿՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Յարութիւն էֆէնտի Նորատունկեան
Ատովմ էֆէնտի Տէրոյենց

Ատենապետ

ՆԻՍՏ ԻԲ.

23 ՄԱՐՏ 1879

ՆԱԽԱԶ. — Տ. Խորէն Սրբազան Նար-Պէյ (առժամեայ կարգեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ստեփան փաշա Ասլանեան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՆՅԱՆՔ

1. Խորէն Արք. Նար Պէյ
2. Կարապետ Եսայ. Սերոբեան
3. Մատթէոս " Իզմիրլեան Բ. 2
4. Ամբրոսիոս Վ. Ուրբինեանց Բ. Պ
5. Գարեգին " Թաթարեան Բ.
6. Խորէն " Կիրոյեանց Բ. Պ
7. Հմայակ " Դիմաքսեան Բ. Պ
8. Յովհաննէս " Փափազեան Բ. 3
9. Ներսէս " Ասլանեան
10. Պօղոս " Խօլտամեան
11. Արիստակէս Բ. Մամբրեան Բ. 3
12. Գէորգ " Արծրունի Բ. 3
13. Գրիգոր " Աճէմեան
14. Խորէն " Փէշախաճեան Բ. 2
15. Յարութիւն " Սերովեան
16. Յովհաննէս " Մկրեան Բ.
17. Սուրբաս " Ստեփանեան Բ. 3
18. Սահակ " Տ. Սարգսեան
- 19.
- 20.

ԵՇԻԱՐՀԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գումգալիւ, Կլտիկ Դաւա
և Գումգալիւի դուրս

21. Գրիգոր Պէրպէրեան
22. Գէորգ Ստիմարաճեան
- Բ. Բացակայութիւն առաջին
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ
- Բ. Պ Բացակայ բանաւոր պատճառ

23. Խորէն Մանուկեան Բ. Պ
24. Կարապետ Աղաբաճեան
25. Համբարձում Մազապուլեան
26. Մինաս Գափաճեան
27. Յովհաննէս Պոյաճեան
28. Ն. Մէղապուլեան Տօթօր Բ. Պ
29. Պօղոս Պառնասեան Բ.
30. Սարգիս Աղաբաճեան
31. Սահակ Ապրո Բ. Պ
32. Սեֆեյրիմ Մանուկեան Բ.
33. Փէշախաճեան Տօթօր Հրօրեւ
34. Բարթոլոմէ Բիւրճիպաճեան
35. Ատովմ Տէրոյենց
36. Գէորգ Ապտուլաճեան Բ. Պ
- 37.

(Բ. Վիճակ)

Պէշախաճ

38. Աղաբաճեան Կրօնական
39. Աղաբաճեան Խօրատունեան Բ.
40. Բարթոլոմէ Հալաճեան Բ.

ԵՆԵՐԳԱՅԻՆ

41. Մկրտիչ Բիւրճիպաճեան
42. Սեֆեյրիմ Մազապուլեան Բ. 4
- 43.
- 44.

Խալիստար Ս. Խալ

45. Սիմոն Յէլլեան Բ. Պ
46. Ստեփան Ասլանեան
- 47.
- 48.

Խալիստար Ս. Կարապետ

49. Միւրաճ Պաճէճիպաճեան
50. Պօղոս Թորոյեան Բ. 2
51. Նիկողոս Ալաճաճեան
52. Տրդատ Փափազեան

(Գ. Վիճակ)

Բերս և

Դաւալ փաշա

53. Արիկ Ունեան
54. Գրիգոր Ալիմիճեան Բ.
55. Մարտիրոս Յ. Տիւրեան Բ. 3
56. Միքայէլ Մամիկոնեան
57. Նշան Քաղապաճեան Բ. 2
58. Ստեփան Խնդիրեան
59. Տեյմուր Մ. Կրօնական
60. Յարութիւն Նորատունկեան Բ. 3
- 61.
- 62.

Միւրաճիչ

63. Յակոբ Նորատունկեան Բ. 2
64. Տիւրեան Եւստոֆեան
65. Պօղոս Երանդեան Բ.
66. Մկրտիչ Գաղաճեան Բ.
- 67.

Պէշախաճ և Դաւալիս

68. Յ. Մէրեճմ-Պալի

(Դ. Վիճակ)

Դուրդունք և Դաւալիս

69. Յովհաննէս Լաւան
70. Ստեփան Պէշախաճեան

- Կատարցիք
71. Կարապետ Շահապետեան
72. Մկրտիչ Մուրադեան
- Նարդարախո
73. Յակոբ Էջմիշինեան Բ.
- Էնիմանաղէ Սամարիայ
74. Պօղոս Մկրտիչեան
- Թովմախո
75. Յովհաննէս Մարգարեան
- Լյուսի Ս. Եղիա և Ս.
- Աստուածամային
76. Գարեգին Յ. Մելիքեան Բ.
- Գորոշիչի
77. Աստիա Իկիտալեան
- Հասար և Պոյաճի գիւղ
- 78.
- Նոր գիւղ և Սրէնիս
79. Ղազար Հովսեփեան Բ. 8
- Պարսա
80. Մկրտիչ Գ. Իսաեան Բ. Պ
81. Յովհաննէս Կրճիկեան
- 82.
- Բարսեղեան Զինեան
83. Յարութիւն Զինեան Բ. 2
- 84.
- (Ե. Վ. Ինճի)
- Սամարիա
85. Աւերբան Պէլիբեան
86. Եղիազար Մելիքեան Բ. 2
87. Մինաս Ճափնափեան
88. Յակոբ Ամասեան Բ. 2
89. Նազարէթ Շահապետեան Բ.
90. Յարութիւն Թիւլեան
91. Յակոբ Արշակ Բ. 2
- 92.
- 93.
- 94.
- Խաւարիչ
95. Առաքել Աւթուն Տիւրքի Բ. 2
96. Ռէթէոս Պէլիկեան
97. Սարգիս Աբրահամեան
- 98.
- 99.
- 100.

- ԳԱՆԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
- Կարին
- 101.
- Բէօրանեան
102. Մ. Փառազեան Տօրթօր
- Անդրիանուպօլիս
- 103.
- Նիկոկիտիս
104. Կարապետ Ս. Իսթրինեան
- Ակն
- 105.
- Հարսիսար
- 106.
- Արարկեր
107. Կարապետ Խաչիկեան
- Բաղէշ
- 108
- Պրուտա
109. Քրիստոստուր Ղազարոսեան
- Երդնիս
- 110.
- Անասիա
111. Համբարձում Աւանանեան
- Բարու
112. Յովհաննէս Ազնաուրեան Բ. Պ
- Եղեանիս
113. Յակոբ Իսթրինեան
- Մանճրլի
- 114.
- Հանճըն
- 115.
- Երզնկա և Բարերդ
- 116.
- Թէփիստաղ
117. Տիգրան Գ. Սինանեան
- Կիսարիս
118. Գէորգ Գըլընեան
- Խարերդ
- 119.
- Պալըքեան
- 120.

- Մուս
121. Ստեփան Փափազեան
- Տիվրի
122. Նշան Գարազաշ
- Զէյթուն և Մարաշ
- 123.
- Տրապիզօն
124. Տիգրան Տ. Ներսէսեան Բ.
- Պարսա
125. Մելքոն Իսկէնտէրեան Բ. 3
- Տիգրանակերտ
126. Միհրան Զօրանեան
- Վան
- 127.
- Արարկեր
- 128.
- Հարէս և Այնթապ
- 129.
- Սերաստիս
130. Մկրտիչ Յ. Մելիքեան
- Ռուստուխ
- 131.
- Կարս
132. Աբրահամ Յ. Այվազեան
- Զէկիաճաղ
133. Համբարձում Սարգիսլիլեան
- Գաղատիս
- 134
- Ատանա
- 135
- Սըղերդ
136. Մատթէոս Աւերբան Բ. 2
- Եօզրատ
137. Լօղօֆէթ Պալազեան Բ. Պ
- Մարաքիս
138. Գէորգ Վարդանեան
- Իզմիր
139. Պապի Պապեան
- Եզիպտոս
- 140

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Հրաժարում նորընտիր Պատրիարքական Փոխանորդի

ՍՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի բացակայութեան Ս. Պատրիարք Հօր, Տ. Խորէն Նար-Պէյ Սրբազանի առժամեայ նախագահութեամբ ատեանը բացուեցաւ ժամը 7 1/2ին ի ներկայութեան 45 երեսփոխանաց, որոց վերջին թիւը յանգեցաւ 37ի:

Պ.

Բնդունելութիւն Ատենագրութեան

Ի. Երեսփոխան

Ատենապետ Փաշան վերջընթեր Ի. Նիստի ատենադրութեան վրայ ի գիտողութիւն հրաւիրեց երեսփոխաններն, և տեսնելով որ ղիտողութիւն ընող չկայ, անմիջապէս քուէի դրաւ զայն, որ ԸՆԴՈՒՆՈՒՅԾԱԻ Ժողովէն միաձայնութեամբ:

2.

Բացակայութիւն

Երեսփոխան Ս. Նաւորեան Յովհաննէս Է. ֆէնտի անձնական տկարութեան պատճառաւ բացակայ ըլլալը գրով յայտնած ըլլալով, օրինաւոր բացակայ նշանակուեցաւ ներկայութեան տուումին մէջ:

3.

Հրաժարական

Երեսփոխան Տօրթօր Փէլտիմալեան Տիգրան Էֆէնտի հրաժարագիրը կարդացաւ, որ է:

Վսեմաւայլ Փաշա

Ատենապետ Ազգային Ժողովոյ

Զմեղ ընտրող Ժողովրդեան կամքը

յարգելով և ամեն նկատողութիւն ի ըս-
կըղբան առ ոչինչ համարելով, բաւա-
կան ժամանակէ ի վեր Ազգային երես-
փոխանական փափուկ պաշտօնը յանձն
առինք մի միայն կարեկցութեան արժա-
նի սիրելի ազգերնուս անձնուիրաբար
ըստ կարի ծառայութիւն մը մատուցա-
նելու գիտամբ: Սակայն ցաւ է ինձ
ըսել, Վսեմափայլ Փաշա, թէ Ժողովին
դոնէ այժմեան կացութեան մէջ, ո՛չ
մէկուն անձնուիրութիւն չէ՝ կարող գո-
հացուցիչ արդիւնք մը յառաջ բերել
յօդուտ ազգին: Այս առթիւ չեմ վա-
րանիր Ձեր Վսեմութեան համարձակա-
պէս յիշեցնել թէ մեր ներկայ Երես-
փոխանական Ժողովը, փոխանակ ազգին
կենսական խնդրոց հետ զբաղելու, բը-
ժուն և սլատի պատ վէճերս վճարման
հաւուրներէ ուրիշ բան մը ըրած չունի
ի վնաս ազգին և այսպիսի փափուկ ժա-
մանակի մէջ:

Ես կը կարծէի թէ, ըստ ներքին
կանոնադրութեան, եթէ երեսփոխան
մը երեք անգամ բացակայ գտնուի՝
ինքնին հրաժարեալ կհամարուի: Սա-
կայն կերելի թէ պատկառելի Ժողովդ
Դիւանը ուշադրութիւն չընելով մեր այդ-
բացակայութեանց, շարունակ հրաւի-
րագիր կը յղէ առ մեզ:

Ուստի ներկայիւս կը խնդրեմ խո-
նարհաբար Ձեր Վսեմութենէն որ բա-
րեհաճի մեր անունը երեսփոխանաց
ցանկէն ջնջել տալ:

Մնամ Ձերումդ Վսեմութեան
Խոնարհ Ծառայ
Տ. ՓԵՏԻՄԱՆԻԱՆ
Բերա 22 Մարտ 1879

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս կը տես-
նէք, Տօրթէօր Փէշտիմալեան հրաժարական
մատուցանելով հանդերձ յանդիմանութիւններ
կուղղէ Ժողովոյս և Դիւանին: Ժողովին վերա-
բերեալ մասը Ժողովին թողով, Դիւանին
վերաբերելոյն համար կը յայտարարեմ թէ
Փէշտիմալեան էֆէնտի կը սխալի կարծելով
թէ Դիւանը սխալ կը գործէ իրեն հրաւիրա-
գիր ուղղել շարունակելով երբ ինքն երեք
անգամէն աւելի բացակայ գտնուելով իրեւ
սլարտազանց հրաժարեցուցման արժանացած է:
Կը յիշէք որ ասկէջ բաւական ժամանակ ա-
ռաջ Ս. Պատրիարքը մեր կանոնին այս տը-
րամադրութիւնը խիստ գտնելով զայն չափա-
ւորել առաջարկելուն վրայ յատուկ յանձնա-
խումբի մը յանձնեցիք խմատասիրել այս կէ-
տը և բարեփոխութեան ծրագիր մը բերել,
որ դեռ եկած չէ. ուստի Դիւանը սոյն տը-
րամադրութեան մասին միշտ չափաւորութիւն
կը գործածէ և երբ անոր գործադրութիւնն
անհրաժեշտ տեսնէ, Ժողովդ կը դիմէ և ըստ
ձեր մասնաւոր որոշման կը վարուի:

ՇԱՀԱՊԱՅ Կ. ԷՖ. — Ըստ իմ կարծեաց
հրաժարող մէկն իրաւունք չունի խնդիր յա-
րուցանելու և զինքն արդարացնելու համար
բացատրութեանց մէջ մտնելու և Ժողովոյ
կամ Դիւանի կողմէն ի պատասխան՝ բացատ-
րութեանց տեղի տալու, որոց ամենին հարկ
չեմ տեսներ այս պարագայիս մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում կա-
նոնը կը տրամադրէ որ պատճառաբանեալ հը-
րաժարականներն նախաքննութենէ մը անցնե-
նելէ ետեւ ըստ պատշաճին տնօրինուին, և ըստ
որում Փէշտիմալեան էֆէնտի պատճառա-
բանութիւնն իմաստասիրելու չափ կարեւորու-
թիւն ալ չունենալով հանդերձ կրնայ գէթ ի
հրապարակի փաթեթ արդեցութիւն ունենալ,
ուստի յայտարարելով այժմէն որ Փէշտիմալ-
եան էֆէնտի կանխաւ Ժողովոյս և Դիւա-
նին դէմ կարծելով որ մէկն այս միջոցին բը-
ժուն խնդիրներով կզրադի և միւսն կանոնի
ճշդիւ գործադրութեան չհսկեր, և ներելի


հաշակելով այս վարմունքն այնպիսի երեսփո-
խանի մը համար որ հակառակ իր յանձնառու-
թեան կանոնաւոր երթեկութիւն չընելով
մեր նկատելուն ոչ սլարագայից և գործոց
դարձուածքներուն տեղեկանալու և ո՛չ Կա-
նոնադրութիւնը սերտելու առիթ և ժամանակ
ունեցած է, ձեր կամքին կը դիմեմ հասկը-
նալու համար թէ սոյն հրաժարականը պար-
զապէս ընդունելութեան դրուի՞ր կուզէք թէ
տրժան կը դատէք յղել զայն ի նախաքննու-
թիւն: Այս մասին երկու հոգիի խօսք կու-
տամ թեր ու դէմ խօսելու պայմանաւ, և
անկէ ետեւ խնդիրը քուէի սխալի դնեմ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Ըստ իս Տօր-
թէօր Փէշտիմալեան էֆէնտի արդէն հրա-
ժարեալ և իբր սլարտազանց հրաժարեալ է
ըստ օրինի:

ՔԱՐԱՔԱՇ Ն. ԷՖ. — Ըստ որում Դիւա-
նը կը յայտարարէ թէ հրապարակին վրայ կըր-
նայ դէշ արդեցութիւն ընել եթէ առանց ի-
մաստասիրելու ընդունուի սոյն հրաժարականը,
ուստի նախաքննութեան յղել կառաջարկեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւասիկ երկու
տարբեր կարծիք, որոց վրայ հարկ է ձեր
քուէով որոշում տալ:

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի
դրաւ նախ Տօրթէօր Փէշտիմալեանի հրաժա-
րականին նախաքննութեան յղումը՝ որ և բը-
ւէ միայն ստացաւ. յետոյ քուէի դրաւ անոր
սլարագապէս ընդունելութիւնը, որ մեծագոյն
քուէով ընդունուեցաւ:



Օ Ր Ս. Կ Ա Ր Գ
Ա
Հրաժարում և որոշումի Պատր. փոխանորդի
ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անցեալ նիստին
Ժողովիս վերստին գումարումն Յարութեան

տօնէն ետքի ձգեցիք բայց Կրօնական Ժողովն
իրաց այս վիճակին մէջ անգլուխ Վարչու-
թեան անհնարին պատասխանատուութեան
ներքեւ ընկճուելէ երկնչելով՝ արտաքոյ կարգի
նիստ խնդրել բռնադատեալ խնդրեր էր Գա-
տաստանական Խորհրդոյ նախագահէն ձեռ-
հրաւէր կարգալ և գրեթէ ինձ ի գիտութիւն:

Ահաւասիկ իր նամակն.
Վսեմափայլ Փաշա էֆէնտի
Ատենապետ Ազգ. Երեսփ. Ժողովոյ
Ազգ. Վարչութեան Կրօն. Ժողովը
անգլուխ Վարչութեան անհնարին պա-
տասխանատուութեան ծանրութեան տակ
չընկճուելու համար հարկ անհրաժեշտ
համարելու բռնադատեալ է առաջի-
կայ ուրբաթ (23 մարտ) Ազգ. Երես-
փոխանական Ժողով հրաւիրել արտա-
քոյ կարգի, Օրակարգ ունենալով Պատ-
րիարքական ֆոխանորդի հրաժարակա-
նը, և ըստ այնմ հաղորդուած է Դա-
տաստ. Խորհրդոյ նախագահ Ս. Հօր որ
հրաւիրագրերը խրկէ:

Պատիւ ունենալով Ազգ. Վարչու-
թեան Կրօն. Ժողովոյ սոյն որոշումը
Ձերդ Վսեմութեան հաղորդելու,

Մնամք խորին յարգանք
Դիւան Կրօնական Ժողովոյ
Ա. Ե. Գ. Վ. Ա. Ե. Գ. Վ.
Ս. ք. Տ. Սարգսեան Կ. Ե. Ս. Սարգսեան
19 Մարտ 1879
Ի Խորհրդարանն Ղալաթիոյ:

Ինչպէս կը տեսնէք, օրակարգնիս դար-
ձեալ միւսնոյն խնդիրն է, որ առաջին նիստին
բաւական վիճարանութեան տեղի տալէն ետքը՝
նիստն անբաւական և խնդիրն անպատրաստ
ըլլալով չկրցաւ յանգիլ որոշման մը: Այսօր
կրկին սխալ խորհիք այս նիստին վրայ, բայց
սլարտ է ներկայ ունենալ ձեր աչաց առջին
որ խնդիրը փափուկ է դանազան տեսակէտով:

և ծանրակշիռ ազգիս համար, որ հազիւ սկը-
սած է աշխարհավարական ասպարէզին մէջ
դողդոջուն քայլ մ'առնել. միանգամայն եւ
ստիպողական, զի այսօր վերջինն է ձեր 78-79
տարեկան շրջանի Ժողովոյ, և եթէ այսօր վը-
ճրական որոշում չ'առած ձգէք երթաք ա-
տենէս, անկերպարան վիճակի մէջ պիտի թո-
ղուք Ազգային գործերը Զեզ կը թողում չա-
փել ասպազային ձեր պատասխանատուութեան
ծանրութիւնը, և ես իմս թեթեւցնելու համար
հարկ կը համարիմ խնդիրն անգամ մ'աւ
սրարգել ձեր առջին իր ամեն հանգամանքնե-
րով:

1. Ս. Պատրիարքն հրաժարական տը-
ռած է Բ. Դրան՝ պատճառելով որ մէկ կող-
մէն իր անձնական տկարութիւնը սաստիկանա-
լով և միւս կողմէն իր գաւառացի ժողովրդեան
հարստահարութենէ՝ աղատելով Օղոտտախառ
Սուլթանին հովանւոյն ներքեւ անդորր կեանք
մը շնորհելու համար մատուցուած թախան-
ձագին խնդիրներն ընդունուելու հարժանա-
նտով, անկարելի եղած է իրեն այլ ևս չա-
րունակել Պատրիարքական պաշտօնը:

2. Բ. Դուռը Ս. Պատրիարքին հրաժա-
րականը չընդունելով իրեն վերադարձուցած է.
և խոստանալով Ազգին համար ապահովու-
թիւն, արդարութիւն և ամենայն բարենորոգ-
մունք, յորդոր քրած է Նորին Սրբազնու-
թեան շարունակել իր պաշտօնը:

3. Ս. Պատրիարքը Բ. Դրան յորդորն և
խոստումներն ընդունելով, մինչև որ ար-
դեամբք չտեսնէ անոնց իրականացումը՝ Պատ-
րիարքական պաշտօնը շարունակել անկարելի
ըլլալը կրկնելով հրաժարագիրը վերստին դըր-
կած է Դուռը:

4. Բ. Դուռը Սրբազանին այս հրաժա-
րականն ալ թէպէտ և վճառար ընդունած չէ,
բայց կրկին իրեն վերադարձուցած չէ. Ս.
Պատրիարքն ալ կրկին իր պաշտօնն ստանձ-
նելով յարաբերութեան սկսած չէ Բ. Դրան
հետ. հետևաբար պաշտօնական առնչութիւն
ները դադարման դատարարուելով՝ Պատ-
րիարքին հրաժարման խնդիրն առաջի քաղա-

բական աշխարհի տեսակ մը պաշտօնական բո-
ղոքի գոյն առած է Հայաստանի մէջ հարստա-
հարութեանց շարունակութեան և բարենորոգ-
մանց յապաղման՝ կամ որ նոյն է Պէրլինի
դաշնադրութեան 61-րդ. § յօդուածին անգոր-
ծադրելի միաւուն դէմ: Այսպէս կը նկատեն
սոյն հրաժարականը մեզի հետ ազգք համօրէն
և բոլոր Եւրոպական դահլիճք, որոնք յիշ-
եալ դաշնադրութեան դրութեամբ Արևե-
լեան խնդրոյն ամեն պարագայոյ նախանձա-
խընդրութեամբ կը հսկեն և կը տեղեկանան ի
պաշտօնէ:

5. Ս. Պատրիարքն առ Ազգն ևս հրա-
ժարական մատուցած է յառաջ քան զժա-
գումն Հայկական խնդրոյն, և ի վերջոյ, զԸս-
խաւոր պատճառ ցոյց տալով անձին տկարու-
թիւնը:

6. Ազգը միշտ մերժած է Սրբազանին
հրաժարականը՝ խոստանալով և հաւանելով
ամեն ինչ որ զիւրութիւն կրնայ ընծայել ա-
նոր պաշտօնավարութեանը, և բաւական հա-
մարելով որ Ն. Սրբազնութիւնը Պատրիարք
մնայ և բարձրէն հսկէ ազգային գործոց ուղ-
ղութեան:

7. Իսկ վերջին ժամանակներս տեսնելով
որ Ս. Պատրիարքը Բ. Դրան ալ հրաժարու-
կան մատուցեր է, և պատճառաբանեալ հրա-
ժարական, ոչ միայն կրկնեց չընդունիլ, այլ և
անհնարին հռչակեց ընդունիլ Ս. Պատրիարքի
հրաժարականը. զի եթէ ընդունէր, լուեկայն
մերժած տխրի ըլլար անոր պաշտօնական հը-
րաժարականին պատճառաբանութիւնները, և
այս չէր կրնար ընել, զի իրեն համար ալ իրա-
ւացի էին անոնք՝ ինչպէս իր Ս. Պատրի-
արքին:

8. Բայց Ս. Պատրիարքը տեսնելով որ
մէկ կողմէ Բ. Դրան առջին հրաժարեալ մը-
նալով չկրնար յարաբերութեամբ գործել, և
միւս կողմանէ ազգին կողմէն իր հրաժարա-
կանն անընդունելի դատուելով կը սրարտաւորի
գործել, իր պաշտօնական ընթացքն իր պաշ-
տօնական հրաժարականին հետ ներդաշնակե-

լու համար դադրեցաւ գործելէ. նոյն իսկ ազ-
գային ներքին գործոց շրջանակին մէջ:

9. Բայց վարչական ժողովներն՝ որ գոր-
ծակից և արտասխանակից են Ս. Պատրիար-
քին, տեսնելով իրաց այս վիճակը, և բոլոր
պատասխանատուութեանց իրենց վրայ միայն
ծանրանալը նկատելով՝ ձայն բարձին և Ազ-
գային ժողովէն դարման խնդրեցին:

10. Ազգային Ժողովը մտածելով որ Ս.
Պատրիարքին հրաժարականը չէր կրնար ըն-
դունիլ, զի ասով, ինչպէս վայրկեան մ'ա-
ռաջ ըսինք, անոր պատճառ ցոյցուած հարըս-
տահարութեանց շարունակումն և բարենորոգ-
մանց յապաղումն ուրացած կըլլար, բայց չէր
կրնար նաև ստիպել Նորին Սրբազնութիւնն
որ շարունակէ իւր պաշտօնական գործերը, զի
ասով Պատրիարքն իր հրաժարականը յետս
կոչած կըլլար առաջի Դրան, որն որ անկա-
րելի էր պատճառներուն յարատեւութեան մի-
ջոյնն, հրաւիրեց վարչութիւնն ամրող՝ այ-
սինքն Կրօնական և Քաղաքական ժողովներն
հանդերձ պաշտօնական զլսով ազգին որ է Ս.
Պատրիարք հոյրն, դարմանն ինք ցոյց տալ
առաջարկութեամբ:

11. Վարչական Ժողովը զինի խորհրդակ-
ցելու Ս. Պատրիարքին հետ՝ երկու տեսակ
դարման բերին առաջարկեցին Ազգային Ժո-
ղովին, որոց մէկուն Ս. Պատրիարքը մասնա-
ւոր գրով համամտութիւն յայտնած էր կան-
խաւ:

12. Ազգային Ժողովը սոյն վերջին մի-
ջոյն ընդունեց հետեւեալ տնօրէնութիւնն ը-
նելով որ կը պարունակէր.

Ա. Ս. Պատրիարքին հրաժարականը չըն-
դունիլ, և անոր պատճառներուն բարձման հա-
ր բողոք բառնալ և խնդիր մատուցանել
Բ. Դուռն:

Բ. Ս. Պատրիարքին հանգիստ տալ Ս.
ազատ ձգելով Նորին Սրբազնութիւնը
ծել առ հարկին ինչ որ պատշաճ կը դատէ
ը պաշտօնին նկատմամբ, որոյ իրաւունքն ի-
րեն վերապահեալ է ազգովին կատարելապէս
Գ. Եղիսիպոսաց դասէն փոխանորդ
լու:

մ'ընտրել Ազգ. Ժողովով և նմա յանձնել
Ս. Պատրիարքին հանգստութեան միջոցին և
յանուն Նորին Սրբազնութեան անոր պաշ-
տօնը վարել Ժողովոց նախագահելով, ըն-
թացիկ գործերը տնօրինելով և պաշտօնական
գրութիւնները կնքելով կամ ստորագրելով.
վերջապէս փոխանորդութիւն ընելով Պատ-
րիարքին՝ առաւել քան զոր Գատապտանա-
կան Խորհրդոյ նախագահն՝ որ Սահմանադ-
րապէս մի և նոյն տիտղոսը կը կրէ, չէր կըր-
նար ընել իր շրջանակին մէջ:

Ահա այս տնօրէնութիւնն է զոր ի գործ
դրիք նախընթաց նիստերուն մէջ. բայց նո-
րընտիր փոխանորդին հրաժարմամբ չկրցաւ
իւր նպատակին հասնիլ: Ուստի այսօր պար-
տիք վճռական և վերջնական որոշում մ'առ-
նուլ և խնդիրը լուծել կատարելապէս:

Ըստ իս՝ խնդիրը պարզ է և անձնական.
կամ պարզապէս քանդելու է այն քաղաքա-
դիտական շէնքը՝ զոր այնչափ դժուարու-
թեամբ բարձրացուցիք Պատրիարքին հրաժա-
րականի աշխարհավարական դիրքին վրայ,
և Ս. Պատրիարքին հրաժարականն ընդունելով
ուրիշ մը Պատրիարք կարգել, ըսել է ձեր
անցեալն ուրանալ և ազգին ասպազային
պատասխանատուութիւնն ստանձնել, և կամ
քաղաքագիտական ճարտարութեան վրայ եր-
կայնաւորութեան և անձնասիրութեան զոհողու-
թիւն յաւելլով՝ պահել այն դիրքը, և նոր-
ընտիր փոխանորդին հրաժարեալ ընդունելով՝
ուրիշ մը կարգել փոխանորդ. ահա այս եր-
կու կէտերուն վրայ խօսքերն ամփոփելու
պայմանաւ վիճաբանութիւնը կը բանամ և կը
հրաւիրեմ Ատենախօսներն ի բեմ:

ՄԵՐՈՒՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես խօսք չը
պիտի ուղէի այս խնդրոյն վրայ և բեմը չալի-
տի ելնէի այսօր, ոչ թէ անոր համար որ խըն-
դիրը վիճաբանութեան ենթարկել չարժէր,
այլ քանզի մեր արդի վիճակը վիճաբանութիւն
չվերցնէր:

Խօսելու ատեն չէ. Տեմբ, այլ գործե-
լու:

Եւ եթէ խօսք առի այժմ, նոյն խի վիճաբանութեան դռները գոցելու նպատակաւ առի զայն, և ոչ ուրիշ պատճառաւ:

Յայտնի է ամենուն որ Պատրիարքական փոխանորդի ընտրութեան այս Ժողովէն կատարուելուն համակարծիք չէի ես: Այդ ընտրութիւնը վարչական Խառն ժողովին թողու առաջարկութիւնն ընողներուն տուածինն էի: Ուստի երբ Ժողովն ընտրութիւնն ինքն ընելու որոշում առաւ, ուղեցի, ջանացի որ գէթ ընտրելոյն վրայ ընդհանուր համաձայնութիւն գոյանար և երբ մասնաւորաբար ժամանակի նիւթական անբաւականութեան պատճառաւ կարելի չեղաւ այն, ձեռնադրեալ մնացի և իմ ընկերներուն հետ ամեն զգուշութիւն բանեցուցի որ և է կերպիւ խնդիր չյարուցանելու համար. վասն զի, կը կրկնեմ, խօսելու ատեն չէ ըստ իս այժմ, այլ գործելու:

Չեմ կասկածիր ընտրելու և կը հաւատամ որ ընտրութեան մասին Ժողովոյդ տուած որոշումն ուրիշ բանէ առաջնորդեալ չէր, այլ ներկայ վիճակին զօրեղ դարմանն այն եղաւ նախաւ կարենալ գտնելու համոզումէն, ինչպէս որ Ժողովդ ալ պատճառ չունի չհաւատալու թէ՛ մեր առաջարկութեան շարժառիթն ոչ այլ ինչ էր, այլ եթէ մեր գործը խնդրոյն յարակից պարագաներուն հետ հաշտեցնելու և արդիւնաւորութիւնն օրինաւորապէս յաջողցնելու փափարը:

Ուրեմն ամենուն տեսակէտն էր՝ մեր վարչական ընթացքին արգելքը բառնալով, միասիրտ միախորհուրդ սղգային շահույց պաշտպանութեանն աշխատելու ազատ մնալ և կարող լինել, ինչպէս որ մեր կողմէն այսպէս կը պահանջէր բացարձակ, ինչպէս որ Ազգը մենէ զայս կակնկալէր իրաւամբ:

Սակայն կը տեսնեմ որ Պատրիարքական փոխանորդի ընտրութեան օրէն ի վեր դէպքերը կայծակի արագութեամբ իրարու կը յաջորդեն և այնպիսի կնճռոտ վիճակ մը կղարդեն մեր առջև, յորում մեր խաղաղասիրական ձեռնադրութիւնը բաւական չնկատուիր, յորում մեր լռին համակերպութիւնն անար-

դիւն կմնայ և բացարձակ մեր համաձայնութիւնն ու գործակցութիւնը պայման կը դառնայ ելից հնարը գտնելու, և ներկայ վիճակին սպառնալից հետեւանքը վանելու:

Աւասիկ, Տեառք, այս ծանր պարագային մէջ է որ հորկադրուեցայ խօսք առնուլ. և չեմ գիտեր թէ կարող պիտի լինե՞մ անոր տպաւորութեան ներքե՞ պահել այն լրջութիւնն՝ որ անհրաժեշտ է լռելի լինելու համար:

Այս անխտաճութեան ի հակակշիռ, իմ պատուական պաշտօնակցացս իմաստութեանն ու խոհականութեանը կարգաւորում, և այն զօրաւոր յուսով թէ քիչէն շատ պիտի հասկընան, կը մտնեմ ի խնդիրն:

Եւ ի ներկայեալ խնդրը կը սրաշարէ զմեզ արդէն իւր բազմադիմի և բազմակնճիւղ հանգամանքներով. և անոնցմէ դուրս յատկապէս կէտ մ'ալ կը պարունակէ, որ ըստ ինքեան բաւական է զմեզ շուարեցնելու: Այս կէտն է մեր ամենասիրելի Պատրիարքին իսպառ թաղը որ յաւելած է իւր հրաժարմանն վրայ:

Յաւալին այն է՝ որ աղգային շահերը հագալու խնամելու սա անգին վայրկեաններուն մէջ, հակառակ ամեն կողմէ ի գործ դրուած անկեղծ ջանից և քրտնաթոր վատարկոյ, կարելի չեղաւ դեռ ևս այնպիսի տնօրէնութեան մը յանգիլ, որով գոհ լինէին թէ Ս. Պատրիարքը, թէ Ազգ. Ժողովը, թէ համօրէն Ազգն և թէ՛ ի մի բան՝ Ազգին շահերը:

Եւ այսպիսի տնօրէնութեան մը յապաղումն այնչափ սրտատանջ եղաւ ամենուն համար, որ իւրաքանչիւր որ խնդրոյն առկա վիճակին պատճառն ուրիշ մ'արարիր մէջ փնտրելու մղուեցաւ անզգապարար, և բացորոշ բան մը չգտնելով, վասն զի չկար, կասկածանայ մէջ խնալու հարկադրեցաւ:

Թայլ տուէք ինձ, Տեառք, որ աւելի բացայայտ կերպիւ նկարագրեմ ձեզ այս վիճակն, որպէս զի քաջ հասկըցուի անոր այսօրուան ծանրակշռութիւնը:

Նախ այս Ժողովն սկսինք:

Ազգ. Ժողովը նկատուելով որ Ս. Մեծ. Եւս. Ս. Պատրիարքն ինչ պատճառ ալ ունէնար հրաժարելու, Ն. Արքայնութեան սրտառանքն որչափ ալ մեծ ըլլային, աղգային շահույց պահանջումը կար անգին, որ նոյն խի Ներսէս Պատրիարքէն մեծ էր, և որ Ներսիս անունը Պատրիարքական տիտէն անգամ աւանդ կը հրամայէր. բայց ըստ սրտմ. Ն. Արքայնութիւնը ցվերջին աստիճան կը սնդէր իւր հրաժարման վրայ և իւր անձն տնտեսական կը հոշակէր Պատրիարքութեան պաշտօնը վարելու և հետեւորար Ն. Արքայնութեան անձը պահ մը հանգիստ թողուլ հարկ կը ըլլար: Ազգ. Ժողովն սրտեց Պատրիարքական փոխանորդ մը կարգել. և բացառիկ եղանակաւ արտօնել զնա Պատրիարքութեան ընթացիկ գործերը տնօրինելու, առժամանակեայ կերպիւ:

Ժողովին ըրածն այս էր. բայց տակաւ տակաւ ուրիշ մեկնութիւն տուաւ: Որպէս թէ ամանք մասնաւոր նպատակ ունենալով Ներսէս սրբազանին Պատրիարքութենէ հրաժեշտը ձեռք բերել, առաջնորդած ըլլային Ժողովացս այնպիսի որոշումներ ընելու, որ իրաց բընական ընթացքով մի և նոյն տրամադրութեան մէջ կը դնէին նոյն խի զԱզգ. Ժողովը: Եւ ինչո՞ւ, զիտե՞ք, այս ձրի զրպարտութիւնը, վասն զի Ազգին շահերը, Ժողովոյս տրամադրութիւնը և Ներսէս սրբազանին հաճութիւնը հարկեցնելու փափար և ջանք ունեցեր էին նորա և Պատրիարքական փոխանորդի ընտրութիւնն անցապաղ կատարել ուղեր էին:

Կը տեսնէ՞ք թէ այսչափ սրաղ եղելութիւն մ'ինչ դժարատեղ մեկնութիւն առած է, որ լոկ կասկածանայ արգասիք է:

Դառնամք Ս. Պատրիարքին:

Պատրիարքական փոխանորդին ընտրութիւնը Ժողովէս կատարուելէ յետոյ, խնդրուել է Նորին Արքայնութենէն որ գնորդնոր փոխանորդ Գեր. Մատթէոս եպիսկոպոսն հրաժարէ ի գլուխ իւր պաշտօնման: Նորին Արքայնութիւնը մտածելով թէ մի գուցէ իւր

հրաժար կարգալը անդի տոյ տարապարտուց ենթադրելու որ իւր հրաժարման վրայ այնչափ սնդելէ ետեւ, Պատրիարքութեան պաշտօնն յանձին իւրում պահելու տրամադրութիւն ունեցած լինի ինքն, ի սկզբան կը գիտարի հրաժար գրելու, և յետոյ գրած հրաւիրագրին ներքե խաղաղ հրաժարեալ ի Պատրիարքութենէ կ'ստորագրէ, և զՄատթէոս եպիսկոպոս Պատրիարքական տիտէոյն փոխանորդ կ'անուանէ, որպէս զի ոչ ոք իրտուենք ունենայ ըսելու թէ քանի որ Նորին Արքայնութիւնը կ'ընդունի Ազգային Ժողովոյ ընտրած փոխանորդն ու կը հրաւիրէ զայն ի պաշտօն, ըսել կը ըլլայ թէ ինք Պատրիարք մնալու կը փափաքի, և թէ իւր հրաժարումն անկեղծ չէ: Բայց այս խաղաղութիւն յաւելածն իւր նպատակէն կարի օտար մեկնութեան ենթարկուեցաւ: Այնպէս մեկնողներ եղան թէ Նորին Արքայնութիւնը Գեր. Մատթէոս եպիսկոպոսին փոխանորդ ընտրուին իրեն անհաճոյ լինելուն համար՝ իսպառ բառը յաւելած ըլլար իւր ստորագրութեան վրայ: Որչափ հետի Նորին Արքայնութեան բարեարտութենէն այս կարգի նսեմ խորհուրդներ, որչափ անհաշտ՝ Նորին Արքայնութեան առ Գեր. Մատթէոս եպիսկոպոսն պոսն ունեցած համակրութեան հետ այսօրինակ զծուծ զգացումներ:

Գանք Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոսին:

Մինչդեռ Մատթէոս եպիսկոպոս երկրին տաղանայն, Ազգ. շահույց փափկութիւնն և իրեն յանձնուած պաշտօնման ծանրութիւնը նկատողութեան առնելով, անձին տկարութիւնը բաւական մեծ արգելք մը կը տեսնէր իւր վրայ դրուած անկալութիւնները պահելու, և այս պատճառաւ հրաժարիլ կուզէր, Ս. Պատրիարք Զօր հրաւիրագրի կընդունի և անոր ստորագրութեան վրայ խաղաղ բառը տեսածին պէս կը խորհի որ սղգ բառն իր ընտրութեան առթիւ տուածին անգամ գործածուած ըլլալով, ինքն անոր բնական շարժառիթն եղած կը լինէր, և թէ Պատրիարքական արտոյ փոխանորդ տիտէոսն յուսակտուր կընէր զինքը Ն. Արքայնութեան բարձր պաշտօնաւթեան և զինքը միայնակ կը թողուր:

Այս կայսրութեան մէջ՝ տեղի էա կը դրժ տարանալ իւր պաշտօնն ու անոր կիրառութիւնը։ մանաւանդ որ Գեր. Մատթէոս և պիսկոսոս իւր ընտրութեանն համար ընդհանուր համաձայնութեան գոյութեան վրայ սղ կատարելու տեղի ունէր։ Ուստի կը կրկն իւր հրաժարականն, և նա ալ մեղի պէս խնդրայ գրեւ չբանալու նարատակա՝ անձին տը կարգութենէն ուրիշ պատճառ ցոյց չտար։

Եւ արդարեւ Գեր. Մատթէոս Եպիսկոսոս պոսին աեղ ուրիշ որ և է խեղցի ազգասէր մի և նոյն կերպով պիտի խորհէր, և նոյն բանը պիտի ընէր։

Բայց այս աղ տխուր մեկնութիւն առաւ։

Ըսին թէ՝ Գեր Մատթէոս Եպիսկոսոսն իւր անձնատրութիւնն ազգին շահերէն վեր կը դատէ, և Ս. Պատրիարքն անվիճաբան հըրաւիրազիր չընդունելուն համար կը հրաժարի. և կամ թէ՝ իւր անձն ազգէն կը խնայէ, և թեթեւ տկարութիւն մը դարձանելը կը նախընտրէ ազգին ծառայել։

Գեր Մատթէոս Եպիսկոսոսը ճանչոյնէր զիրաւ կը հասկնան թէ՝ որչափ անտեղի է այս մեկնութիւնը։ Եւրին Գերատառտութեան ոչ ազգասիրութիւնը կրնայ կասկածանայ ներքեւ ձգուիլ և ոչ գործունէութիւնը։ Եւն իսկ անոնք որ Ե. Գերատառտութեան ամեն գործերուն համակործիր չեն գտնուած, տեղի չունին ըսելու թէ՝ նորա տեսակետը միշտ ազգին շահերեղած չըլլան և թէ նորա քանքերն առ այն ուղղեալ չըլլան։

Աը տեսնէք, Տեաքք, թէ կրողութիւնք ո՞ւր կը մնան, և կասկածն զմեզ ո՞ւր կը տանի։ Հատա եթէ քիչ մ'ալ կենամք այս վիճակին մէջ, և թողումք որ կասկածանք կասկածանայ վրայ բարդուելով, հասանք մը կողմեն և զմեզ քչեն տանին անատուգութեան լինն մէջ թափեն, ինչ աղետաբեր հետեանք կը ծագի անկից։ Ես չեմ ուղեր այս հետեւանքին քողը վեր առնալ, ևս չարագուշակ լիննէ կը յաշուիմ, և միայն կաղաչեմ զձեզ որ մեր շուրջը դարձաներուն վրայ թափանցող ակնարկ մը ձգէք, այն բաւական կըլլայ ձեզ հասկնելու թէ ինչ ծանր պատասխանա-

տուութիւն կայ ազգին երեստխմանայ վրայ, մեր վրայ։

Հայկական ինդիքոյն մէջ ժողովոյս բըռնէ իւր ընթացքը նկատողութեան առիթ վերջին անգամ՝ և բարենորոգմանց յաւճատխուսք մը դրիք, որմէ շատ բան կը յուսայ ազգը, և շատ բան պիտի պահանջէ ժողովը։ Վստէ՞ք ստիպոյ թէ յաւճատխուսքը դեռ բան մը չը կրցու ընել, և չպիտի կրնայ ընել, մինչև որ ներկայ վիճակին մէջէն չերկնմք։

Թողումք զոյս, աւտակ մեր Արծնական ժողովն որ դեղ յարտաբոյ կարգի նկատ կը գումարէ և եթէ Վ. Բ. ընտրութիւնն անգլուխ թողուի, ևս պաշտօն չեմ վարեր կըսէ. աւտակ մեր Վարդայ ական ժողովը որ մի և նոյն պատճառաւ իւր հրաժարականն ստորագրեր սրտաբաւեր է, զոր տեսայ քիչ մ'առաջ և անտարակոյս պիտի մտաւայանէ զայն խմբովին եթէ ներկայ վիճակը դարձանալ ազգաւ տընտրելութիւն մը չընէ այսօր ժողովս։

Երկուքն ալ իրաւունք ունին. կորեյ՞ է միթէ սրահանջել որ Ազգին Վարչական Ժողովոյ անունն աւաշտօնը պահեն իրենց վըրայ և ազգին գործերը անորինելու համար կաշկանդեալ պատասխանատու մնան իրենց խմբին առջև, ազգին առջև, պատմութեան առջև։

Բայց եթէ տանայ հրաժարականներն ալ տառաւ մեր գիւտնին վրայ, կարծեմ քանի մը նիստեր չեն բաւեր մեզ յայնժամ միմիայն հրաժարականներուն իրարու ունեցած յարակցութիւնն իմաստասիրելու և անոնց դաստկարգութիւնն ընելու համար։

Սոցոյց քիչ մ'առաջ քանի մը խօսք ալ ժողովրդեան մէջ տիրած յուզման վրայ ընելու, որ իւր կարեւորութիւնն ունի և պէտք է ուշադրութեան առնուի։

Ժողովուրդն երկրին զանազան մասանց բարենորոգմանն հանդիսատես, և դեռ ևս նախկին հարատւահարութիւններէն անդերծ, իւր յոյսն ազգային իշխանութեան և անոր Վստէն վրայ դրած կարասէ անհամբեր, որ ժամ յառաջ ինքն ալ սխի վայելել բարեւորագոյն բարիքը։ Եւ այս զգացումէն մըզ-

եալ հետաքրքիր կըլլայ լսել իմանալ այն աւան ազգային տնօրէնութիւն և հետաւորութիւն, որ իւր վիճակն ակտիւն կը ծառայեն։ Բայց կը տեսնէ որ իրեն ամենէն աւելի յուսատու անձն, ամեն, Երեսէ Պատրիարքը հեռի կը մնայ անսարէզէն, և ասոր պատճառն անխմանալի կը լինի իրեն։ Եւն միջոցին այն ամեն կասկածներն, զորս քիչ մ'առաջ թըւեցի և որովք նոյն իսկ մենէ շատերը սրտաբաւ են, իւր ականջը կը հասնին, և գիտէ որոյ բերնով և ինչ նպատակի ծառայողնէրաւ միջոցով։ Աւտակ գայթակղութիւն մը որ անվիճաբան կը ծառայի, և աստարէզ կը բանայ ամեն անոնց որք պղտոր ըլին մէջ կրնան որս գտնել։

Իրաց այս մղար ընթացքը կասեցնելու ներկայ վիճակին սպառնացած վտանգը չէզոքացնելու կարող և ձեռնհաս մարմինն այս Ազգ. Ժողովն է։ Եթէ սա իւր կոչման բարձրութեանը մէջ է, որուն տարակոյս չունիմ, եթէ սորա անգամներն իրենց արտաւայ գիտակցութիւնն ունին, որոյ վրայ չեմ կասկածիր, ահա հրաւեր կը կարգամ իրենց այս բեմէն ի բաց թողուլ մանրամասնութիւններն ու պարագաները, զոհել կարծեաց տարբերութիւններն և ազգին իսկական շահն ու իրաց ներկայ վիճակը միայն նկատողութեան առնուլ ելից հարր գտնել։

Անկարելի չէ այս, և թերեւ մէջ այնչտի դժուարին որչափ կը կարծուի. կը բաւէ որ ընդհանուր համաձայնութեամբ գործեմք զոր ինչ պէտք է գործել, և այս համաձայնութիւնն ալ պէտք է ի զոյ ամել, ի սրահաւ, նութիւն ազգային շահույց։

Կարծեաց տարբերութիւնէ հրաժարելու և ընդհանուր համաձայնութիւն գոյացնելու առաջին փորձն ես պիտի տամ, քաջայոյս ըլլալով որ զամենքն ալ նոյն տրամադրութեան մէջ պիտի գտնեմ։

Արդ՝ ներեցէ՛ք ինձ որ ելից հնարին վրայ ես իմ կարծիքս ներկայեմ Ձեզ։

Ամեն. Երեսէ Սրբաղանին իւր հրաժարման վրայ վերջին անգամ յուսելու խաղաբաղը չունի բնական այն նշանակութիւնը զոր վերագրել գոհեցին անոր։ Մեր երբէք կաս-

կածած չէինք Սրբաղան Հօր հրաժարմանն անկեղծութեան վրայ. Եւ Սրբաղանութիւնն առաջին անգամէն սխալ անկեղծորէն կուզէր հրաժեշտ տալ Պատրիարքական պաշտօնին, և ամեն անգամ որ Ազգ. Ժողովը չընդունէր Ե. Սրբաղանութեան հրաժարականն, ոչ թէ զայն չընդունէր, վասն զի անկեղծութեանը վրայ վստահ չէր, քաւ լիցի, այլ վասն զի ամեն անգամուն ալ ազգին շահույց անհամաձայն դատու զայն ընդունիլ։

Երբ այսպէս ըսած էր Ժողովն, և զայն դարձեալ կը յայտարարեմք այսպէս, խաղաբաղին տրուած նշանակութիւնն իւր զորութիւնը կը կորուսանէ, և պէտք է որ կորուսանէ. միթէ՞ Ե. Սրբաղանութեան հրաժարականը մինչև յարդ անկեղծ չէր և այս անգամ խաղաբաղով անկեղծութիւն գոհեցու. կայ արդեօր մեր մէջ այս կերպով խորհող մէկը. անշուշտ ոչ։

Ուրեմն ինչ վիճակ որ ունէր մինչև յարդ Երեսէ Պատրիարքին հրաժարականը յաշ ժողովոյ, նոյն վիճակին մէջ է և այսօր, իսկ պար բառը բնական տարբերութիւն մը բերած չէ անոր վրայ։

Եւ ինչպէս որ Ազգ. Ժողովը չէր ընդգնած Ե. Սրբաղանութեան հրաժարականը, դորձեալ չընդունիր, վասն զի չկրնար ընդունիլ զայն ի վնաս ազգային շահույց, հետեւաբար չկայ Ժողովոյս համար Պատրիարքական հրաժարագրի նոր խնդիր, վասն զի այն մատին իւր որոշումը տուած է արդէն։

Գալով նորընտիր Պատրիարքական փոխանորդի հրաժարման, Ժողովն զոյն ալ չընդունիր նմանապէս։ Եթէ նորընտիր Պոխանորդին հրաժարման պատճառն անձին տը կարութիւնն է, ազգն իրաւունք ունի իւր և պիսկոսոսին անձն ալ պահանջել, զայն հանրութեան շահուն գործածելու համար. և Գեր. Մատթէոս ալ ըստ որում Հայ Եպիսկոսոս պարտի իւր անձը դնել իւր ազգին։ Իսկ եթէ իւր ընտրութեան մէջ ընդհանուր համաձայնութիւն մնտուելու հարկն է իւր հրաժարման պատճառը, մեք գտնենք ալ կը միաբանիմք այժմ, կը մերժեմք նորա հրաժարակա-

նրն, և այսպէսով ընդհանուր համաձայնու-
թիւնը կիրառելու:

Երբ Ազգ. Ժողովն կրօն. թէ՛ զՆերսէս
արքեպիսկոպոս միայն կը ձանձէ ազգին Պատ.
րիարք, բայց ազատ կը թողու զՆա չգրադիւ
ընթացիկ գործերով, և միայն ազգային բարձ-
րագոյն շահուց վերին հսկողութիւն ընել, ինչ
եղանակաւ որ յարմար դատի, և երբ զԳեր.
Մատթէոս եպիսկոպոսը Պատրիարքական Փո-
խանորդ կը կարգէ, որ յանուն Ամեն. Ներ-
սէս Ս. Պատրիարքի. բայց իւր անձին ալ
տասխանատուութեան ներքեւ, ազգային ըն-
թացիկ գործերը տնօրինէ, երբ կըսեմ այս-
պէս կարողէ Ազգ. Ժողովն, ինչ զգուարու-
թիւն կրնայ յառնել Ս. Պատրիարքի կողմէն:
Այս տնօրէնութիւնն ո՛չ իւր հրաժարականին
անկեղծութեանը վրայ կասկած կը հրաւիրէ,
և ո՛չ ալ արդեւ կը դնէ Ն. Սրբազնութեան
ընել այնպէս, ինչպէս պիտի ընէր իւր հրա-
ժարականն ընդունուած ատեն:

Բայց այս եղանակն զմեզ կը փրկէ ներ-
կայ վտանգալից վրձակէն, և ամեն դժուա-
րութիւն կը հարթէ:

Կը մնայ գործը Գեր. Մատթէոս եպիս-
կոպոսի ազգապիտութեանն ու խոհականու-
թեանն, որով զխոնայ փարեւ իւր պաշտօնը
յանուն և ընդ հովանեաւ Ամեն. Ներսէս Ս.
Պատրիարքի ոյնալիս խնամութեամբ որ Ն.
Սրբազնութիւնն առիթ չունենայ իւր հրաժա-
րագիրը նորոգելու և անոր վրայ պնդելու:

Եւ ևս վստահութիւն ունիմ Գեր. Մատ-
թէոսի վրայ թէ՛ զայս այսպէս ընելու յաջո-
ղակութիւնն ունի:

Ուստի կառավարեմ որոշել միաձամուռ
թէ՛

1. Ազգ. Ժողովը չունի իրեն համար
Պատրիարքական հրաժարականի նոր խնդիր,
զի մերժած է զայն արդէն, ազգային շահուց
պահանջման առջև:

2. Ազգ. Ժողովը չընդունիր Գեր. Մատ-
թէոս եպիսկոպոսի հրաժարականն ի Պատրի-
արքական փոխանորդութենէ, և կը յանձնա-
րարէ Վարչութեան կրկին ժողովոյ հրաւիրել
զՆա անսկզբագէտ ի գլուխ իւր պաշտաման:

Եւ յետոյ շարունակեց Ներսէսը այժմ
Տեարք, որ բովանդակեմ ձեր որոշմանց և
քուէյց արդիւնքը և հոչակեմ թէ Ազգային
ժողովը կը վճռէ որ Ներսէս Սրբազան Արքե-
պիսկոպոս, է և մնայ Պատրիարք Հայոց, կը
վճռէ նաեւ որ Տ. Մատթէոս եպիսկոպոս իդ-
միրեան է և մնայ Պատրիարքական Փոխա-
նորդ և յանուն ազգային շահուց Ժողովն կո-
չում կընէ Նորին Գերապատուութեան անձ-

Ամեն կողմէ ձայներ. — Բուէ՛, քուէ՛:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդիրը քուէար-
կելէ առաջ վիճարանութեան փակումը պէտք
է որոշենք: Ուստի նախ վիճարանութեան շա-
րունակութիւնը կամ փակումը քուէի կենթար-
կեմ:

Ժողովը միաձայն քուէով վիճարանու-
թեան փակումն ընդունեց:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այժմ կանցիմ
Մէրեմ-Պուլի էֆէնտիի կրկին առաջարկու-
թեանց քուէարկութեանը:

Եւ Ատենապետ փաշան կարդալով Ս-
ռաջին առաջարկութիւնն՝ որ է,

«Ազգ. Ժողովը չունի իրեն համար Պատ-
րիարքական հրաժարականի նոր խնդիր, զի
մերժած է զայն արդէն, ազգային շահուց
պահանջման առջև:

Բուէի դրաւ զայն, որ միաձայնութեամբ
ընդունանք Ս. Պատրիարքի:

Նոյնպէս կարդալով Երկրորդն՝ որ է,

«Ազգ. Ժողովը չընդունիր Գեր. Մատթէոս
եպիսկոպոսի հրաժարականն ի Պատրիարքա-
կան փոխանորդութենէ, և կը յանձնարարէ
Վարչութեան կրկին ժողովոյ հրաւիրել զՆա
անսկզբագէտ ի գլուխ իւր պաշտաման»:

Բուէի դրաւ զայն ևս, որ նոյնպէս միաձայ-
նութեամբ ընդունանք Ս. Պատրիարքի:

Եւ յետոյ շարունակեց Ներսէսը այժմ
Տեարք, որ բովանդակեմ ձեր որոշմանց և
քուէյց արդիւնքը և հոչակեմ թէ Ազգային
ժողովը կը վճռէ որ Ներսէս Սրբազան Արքե-
պիսկոպոս, է և մնայ Պատրիարք Հայոց, կը
վճռէ նաեւ որ Տ. Մատթէոս եպիսկոպոս իդ-
միրեան է և մնայ Պատրիարքական Փոխա-
նորդ և յանուն ազգային շահուց Ժողովն կո-
չում կընէ Նորին Գերապատուութեան անձ-

նախորդար դաւ անցնել իրեն համար ազգային
սահմանաւոր պաշտօնին գլուխը: Բնականա-
բար կրօն. և Բազ. Ժողովներն Պատրիարք և
Փոխանորդ ունենալով իրենց նախագահ, ըստ
պատշաճին, հարկ չեն տեսներ այլ ևս իրենց
հրաժարականը տալու, և կը շարունակեն ազ-
գապիտարար իրենց սահմանադրական պաշտո-
նը: Նոյնպէս Խորհրդարանական Յանձնա-
խումբն կը շարունակէ Ժողովն ստացած իր
փափուկ և կարեւոր պաշտօնը ընդ նախագա-
հութեամբ Ս. Պատրիարքի և գործակցու-
թեամբ Պատրիարքական Փոխանորդի:

Վերջապէս Տ. Ներսէս Ս. Պատրիարք,
Տ. Մատթէոս եպիսկոպոս Պատրիարքական
Փոխանորդ, Վարչական Ժողովը և Խորհրդ-
արանական Յանձնախումբ սլաւաստանա-
տու են իւրաքանչիւր իրենց գործոց համար
առաջի Ազգ. Ժողովոյ: Կը մնայ Պատրիար-
քական Փոխանորդին պաշտօնի հաստատու-
թեան խնդիրը: Ազգ. Ժողովը Վարչական
ժողովոյ կը յանձնէ նորին Գերապատուու-
թեան հաղորդել իր հանդիսաւոր որոշումը և
Պատրիարքարան իջեցունելով, սկիզբն առ-
նել տալ պաշտօնին: Իսկ Բ. Գրան մատու-
տուցանելի Հանրադիրն յանձնուած է արդէն
Խորհրդարանական Յանձնախումբին որ զայն
յառնել Ժողովոյ ընթերցեալ ծրագրին հա-
մեմատ և եթէ հարկ տեսնէ, նաեւ տուանց ի-
մաստի այլալուծեան սրբազնութեամբ պատ-
րաստելով պիտի մատուցանէ հանդիսաւ Բ.
Գրան, և այն առթիւ պիտի խնդրէ նաեւ
Հայկական բարենորոգմանց փութացումն, որ-
պէս զի Ս. Պատրիարքին իր հրաժարակա-
նը յետոյ կոչելու պարտաւորի և Պատրիար-
քական փոխանորդութեան այս առժամա-
նակեայ տնօրէնութիւնը վերջ գտնէ ինչպէս որ
կը փափարի Ազգ. Երեւոյթականութիւնն և ընդ
նմին Ազգն համարէ:

Այս խնդիրը վերջացած է: Կանցնինք
այժմ ուրիշ խնդրոյ:

4.
Երեսփոխանական ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — [Պարունակելով]
Ժողովին այս աւուր նիստը ըստ Կանոնադրու-
թեան մեր տարեկան շրջանին վերջին նիստն
է: Այս օրէն ետքը Ժողովարանը պիտի փակ-
ուի մինչև Մայիսի սկիզբը: Սակայն այս փա-
կումէն առաջ պէտք է հրաւիրեմ ձեր ուշադ-
րութիւնը երեսփոխանական ընտրութեանց
վրայ, որ այս տարի մեծ կարեւորութիւն ու-
նին. զի երեսփոխանաց 140 թիւը շատ նուա-
զած է և գրեթէ 100 ի իջած: Աստի բաւա-
կան ամբողջացուցիչ ընտրութիւններ կան կա-
տարուելիք թէ՛ Պոլսոյ թաղերուն մէջ և թէ՛
մանաւանդ զաւառաց մէջ որոց 19 երեսփո-
խանք պահատ են: Բայց աստի Ժողովին երկ-
տարեկան մէկ հնգերորդի մասնակի նորո-
գութեան ալ ժամանակն է այս տարի, և
կործեմ Գ. վիճակին է կարգն, որոյ մէջ կը
գտնուին Բերա և Գաւրմարա, Միջագիւղ և
Պէյքօղ ու Ղաւթիա թաղերը: Նաեւ եկե-
ղեցական երեսփոխանաց ալ, որ արդէն եր-
կու պակաս ունին, այս պակասներուն ընտ-
րութեան հետ մէկ հնգերորդին վիճակարկու-
թեամբ նորոգութիւնը պէտք է կատարուի այս
տարի, զի այսպէս որոշած է արդէն Ազգային
Ժողովն:

Այս ամենը Վարչութեան կը յանձնենք
այժմէն, խնդրելով որ մեծ հագ ու խնամք
տանի ամեն տեղ երեսփոխանական ընտրու-
ղաց արդարութեամբ որոշուելուն և բազմու-
թեամբ քուէարկութեան մասնակցելուն, ընտ-
րելոց պատուաւոր և ազգանուէր անձինք ըլ-
լալուն, ընտրութեանց օրինաւորապէս կատար-
ուելուն և տեղեկագրութեանց կանոնաւորու-
պէս խմբագրուելուն, և վերջապէս ամենայն
ինչ յառաջիկայ շրջանի բացման Ա. նիստին
կազմ և պատրաստ ունենալուն: Այնքան կա-
րեւոր է ըստ իս այս վերջին կէտը, որ այս
տարի նոր ընտրութեամբ երեսփոխանական
մարմնոց գրեթէ 3/4 մասին վերանորոգում
տեղի ունենալով, կարծեմ պիտի պարտաւո-
րիմք Դիւանի ընտրութիւնն խոհեմութեամբ

յետաձգել Երեսփոխանական ընտրութեանց զէթ մեծ մասին կատարուելուն : Ուստի կը կրկնեմ խնդրել որ Վարչութիւնն ամեն ջանք ի գործ դնէ մինչև Մայիս 4 սոյն ընտրութիւններն ամբողջապէս կատարել տալու :

ՊԵՅԼԻԿԱՅԵԱՆ Ս. ԷՖ. — (Փոխ. Ռոննապետ Փար. Քաղովոյ) Երեսփոխանական պալատը լրացնելու գործը Վարչութեան յանձնել կուզէր, բայց Վարչութիւնն արդէն ինքնամբողջ չէ, տնոր պակասն ո՞վ պիտի լրացունէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Երեսփոխանական ընտրութեանց կատարման դիւրութիւնը ըլլալու համար կրնայ Վարչութիւնը մասնախումբ մը դնել, որպէս զի ընտրութեան բեռն իրեն վրայ չ'էփանանայ : Այս առթիւ կանաչարկեմ նաև որ ըստ որում ընտրելոց հաճութիւնը կանխաւ առնուելու հրահանգ կուտայ Վարչութիւնը, ժողովիս ամեն նիստերուն ներկոյ գտնուելու համար ալ հաճութիւններն խնդրուի :

ԷՆՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Պէյլիկեան էֆէնդի կըսէ թէ Վարչութիւնն ամբողջ չէ, թէև չգիտեմ այդ խօսքով ինչ բնէ կուզէ, բայց եթէ ըսել կուզէ որ ժողովականներէն հրաժարեալներ կան, իմ ըսածս նայելով տեսաւ խորհուրդներէն և Հոգաբարձութիւններէն ալ ստիպանք կան, որոնք ո՞վ պիտի լրացունէ :

ԵՈՒՍՈՒԴԵԱՆ Տ. ԷՖ. — Վարչութիւնը կըսէ թէ Երեսփոխանաց պալատները լրացը, նեղու համար նախ նոյն ինքն Վարչութիւնն որ արդէն պակասներ ունի, ամբողջացնել պէտք է : Այս խօսքը հարկ չէ որ լռութեամբ անցնինք, պատասխան մը տալու է և եթէ կը ներքէ՛ք ևս կրտամ այդ պատասխանը :

Ըստ որում յառաջիկայ մայիսին պիտի սկսի ժողովոյս սահմանադրական նոր շրջանը, ես անկարելութիւն կը տեսնեմ ներկայ շրջանին մէջ որ այսօր իւր փակուած կ'ստանայ Վարչութեան պակասը լրացնել : Իսկ իմ է

մայածիս նայելով, Վարչութիւնն որչափ ալ որ իր անդամոց մէջ արտօսանք ունի, այսու ամենայնիւ մեծամասնութիւն ունի եղեր, ուստի ժողովս ուրիշ միջոց չունի առ այժմ, եթէ ոչ իր ընտրակալութիւնը յայտնելով Վարչութեան խնդրել որ ազգասիրաբար չորոշուի իր ներկայ անդամներովը մինչև ժողովոյս յառաջիկայ շրջանի բացումը, յորմէ ետքը պիտի կրնանք Վարչութեան ստիպած անդամոց թիւը լրացնել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Կը ձայնակցիմ Երեսփոխան էֆէնդիին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կը ձայնակցիմ և ես :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ի հարկէ ժողովիս ստորագրութիւնն է Վարչական ժողովոց պակասները լրացունել, ինչպէս որ այս մասին տակն անգամ ստշտեմական խնդիր ընդունելուն կատարած է, մենք այժմ Երեսփոխանական մարմնոց ամբողջացման հոգն Վարչութեան կը յանձնարարեմք, նա ալ իր ճիշդերուն նկատմամբ իր ստորագրութիւնները կատարելով հանդերձ իր ամբողջացման համար մեր բով դնեցած իրաւունքն ի գործ դրնելու միշտ կարող է : Հիմա ոչս խնդրը վերջացունելու համար ձեր բռէին պիտի դիմեմ, թէ և սահմանադրական գործողութիւն ըլլալով մասնաւոր որոշման հարկ չիկայ :

Զայս բնելով Ստենապետ փաշան բռէի դրու Վարչութեան յանձնարարել :

1. Եկեղեցական Երեսփոխանաց վիճակարկութեամբ հինգ մասի բաժնելով Ս. հնգերորդին նոր ընտրութեամբ վերանորոգուի :

2. Կ. Պօլոյ թաղական Երեսփոխանաց Գ. վիճակի վիճակող հնգերորդ մասին նոր ընտրութեամբ փոփոխութիւնը :

3. Եկեղեցական և Աշխարհական Երեսփոխանաց թէ՛ տատ և թէ՛ ի գաւառի ստիպած ընտրութիւններուն ամբողջացումը :

Եւ 4. բոլոր ընտրութեանց մինչև առաջիկայ մայիս 4 կատարուելուն հոգն ու խնամքը :

Ժողովը միտձայն հաւանութեամբ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՑ սոյն բռէին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչպէս եկեղեցական Երեսփոխանաց համար, նոյնպէս գաւառականաց համար ալ վիճակու փոփոխութիւն պէտք է ըլլայ ըստ իս, որ չէ եղած ցարդ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես այդ մտածեցի, բայց ըստ որում գաւառական Երեսփոխանաց մէջ 19 Երեսփոխանք, ստիպա կան, տեղի յարմար թաւեցաւ ինձ այս անգամ միայն և եկեղեցական Երեսփոխանաց վիճակարկութեամբ բաւականանալ, գաւառականաց համար վիճակու փոփոխութեանն առաջ միանգամ ամբողջացմանն ստիպել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ստենապետ փաշայի այս ղիտողութեան վրայ ետ կ'առնում առաջարկութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չմոռանք սա ալ յայտարարել որ ինչպէս արդէն որոշուած է, մինչև վիճակու փոփոխելի երեսփոխանաց վերանորոգման ընտրութիւնները կատարուին և ժողովէս վաւերացուին, հիները կը շարունակեն իրենց սրնշտը :

2.

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՈՒԵԿԵԴՈՒ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ (շարունակելով) Մեր յառաջիկայ շրջանին համար կարևոր կէտ մ'ալ կայ, զոր հարկ կը համարեմ յիշեցնել : Ըսելիքս Վարչութեան 79—80 տարւոյ Հաւակելուն է, որ յառաջիկայ շրջանի Ա. նիստին Ղիւանիս գրասեղանին վրայ պէտք է պատրաստ դառնուի, արդէն անոր Հիմնագիծը կայ, որ թղթադրամի վրայ շինուած է, ինչպէս կը յիշէք. Վարչութիւնը շնորհ կ'ընէ

զայն մէջիտիկի վերածելով տրոյց կանոնական բարեփոխութեանց ծրագրով հանգերձ ժողովիս մատուցանել ի վաւերացումն :

Այլ յիշէք անշուշտ որ մինչև այս վաւերացման կատարումը Վարչութեան յանձնը, առաջին առժամաց կարգադրութիւն մ'ընելով, արժաթ գանձել և ծախսել չափաւոր և արդար հաշուով չը :

3.

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆ

